ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

N 84
20 փետրվար 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 16-Ա և 17-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 16-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՎԱՍՊՈՒՐԱԿ ՄԱՄԻԿՈՆԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ,ԹԻՎ 5/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆՆԵՐԸ ԵՎ ԲԱՑՎԱԾ ԴՌՆԵՐԸ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթները, հաշվի առնելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ն կողմից տրված տեխնիկական վիճակի վերաբերյալ շինությունների հատակագիծը և Վասպուրակ Մամիկոնի Գաբրիելյանի դիմումը՝
որոշում եմ.

1. Վասպուրակ Մամիկոնի Գաբրիելյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող Թումանյան համայնքի, Թումանյան քաղաքի 4-րդ փողոցի, թիվ 5/1 հասցեում գտնվող տնամերձ հողամասում 2016թ. բնակելի տանը կից ինքնակամ կառուցված 65.8քմ ընդհանուր մակերեսով շինությունները և ինքնակամ բացված 4 դռները և 2 պատուհանները ճանաչել օրինական:
2. Ընդունել ի գիտություն, որ Թումանյան քաղաքի 4-րդ փողոցի, թիվ 5/1 հասցեում գտնվող տնամերձ հողամասում 2016թ.բնակելի տանը կից ինքնակամ կառուցված 65.8քմ ընդհանուր մակերեսով շինությունները և ինքնակամ բացված 4 դռները և 2 պատուհանները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Ինքնակամ շինությունների օրինականացման համար Թումանյանի համայնքապետարանի 900265123407 հաշվեհամարին մուծել 25130 դրամ,որից շինությունների համար՝ /65.8 x 10000x0.035/ 23030 դրամ,իսկ 4 դռների և 2 պատուհանների համար՝ / 6x10000x0.035/ 2100 դրամ:
4.Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 17-Ա

06-004-0049 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼՄԱՍՏ ԲԱՂԴԱՍԱՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԵՎ ԱՇԽԵՆ ԳԱԳԻԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Ա. Բաղդասարյանի դիմումը, Անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման թիվ 506075 վկայականը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 13.11.2018թ. գրանցամատյան թիվ 2149 վկայագիրը, <<Գասպար Վեքիլյան>> ԱՁ-ի կոմից կազմված հողամասի և շենք-շինությունների հատակագիծը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝
Որոշում եմ.

1.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-004-0049 ծածկագրի տակ գտնվող 0,037 հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1952թ. կառուցված 66,46 քմ մակերեսով բնակելի տան, 1971թ. կառուցված 1,28քմ մակերեսով սանհանգույցի և 1971թ. կառուցված 7,2 քմ մակերեսով մառանի նկատմամբ Ալմաստ Բաղդասարի Բաղդասարյանի/ծնվ. 1962թ./ և Աշխեն Գագիկի Բաղդասարյանի /ծնվ. 1995թ./ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:
2.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4.Անշարժ գույքին տրամադրել փաստային հասցե՝ Թումանյան համայնք, ք. Թումանյան, Քոբայր թաղամաս, թիվ 7/1 բնակելի տուն:
5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ՉԱՎԱՐՅԱՆ**